



**«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեման՝ «Ընտանիքի հոգեբանություն,  
կոնֆլիկտներ»**

**Առարկան՝ Հայոց լեզու**

**Հետազոտող ուսուցիչ՝ Ռուզաննա Ներսիսյան**

**Ուսումնական հաստատություն՝ Սոլակի միջնակարգ դպրոց**

**Երևան 2023**



## Բովանդակություն

Ներածություն .....	4
Ընտանեկան կոնֆլիկտներ .....	5
Եզրակացություն.....	<b>Ошибка! Закладка не определена.</b>
Կոնֆլիկտներ .....	13
Պատասխանատվություն .....	15
Վստահություն .....	16
Ամուսինների միջև հարաբերությունները.....	17
Ընտանեկան կյանքի պատրաստակամություն .....	17
Օգտագործված գրականության ցանկ .....	20

## Ներածություն

Ընտանիքը մարդկանց այն խումբն է, որի անդամները միմյանց հետ կապված են արյունակցական կապերով, զգացմունքներով, փոխադարձ օգնության պատրաստակամությամբ և հոգատարությամբ, բարոյական պատասխանատվությամբ և ընդհանուր կենցաղավարությամբ: Երեխայի բարոյական դաստիարակության հարցում շատ բան պայմանավորված է այն հանգամանքով, թե ծնողներն ինչպիսի վերաբերմունք ունեն միմյանց հանդեպ: Հավանաբար չկան ընտանիքներ, որոնցում չլինեն վեճեր և տարաձայնություններ:

Որոշել՝ ով է ճիշտ, մայրի՞ կը, թե՞ հայրիկը, ընտրել, գնահատել, կանգնել երկու ամենաթանկ մարդկանցից մեկի կողմը խիստ դժվար է երեխայի համար, որովհետև նա չունի կյանքի փորձ: Կոնֆլիկտային ընտանիքում մեծացած երեխան, տեսնելով ու զգալով ծնողների թշնամական վերաբերմունքը միմյանց նկատմամբ, ձեռք է բերում հաղորդակցման բացասական փորձ: Նա դադարում է հավատալ, որ կնոջ և տղամարդու միջև կարող են հաստատվել ընկերական ջերմ և սիրալիր փոխհարաբերություններ: Երեխան ժամանակից շուտ հիասթափվում է ընդհանրապես մարդկային փոխհարաբերություններից և ձեռք չի բերում համագործակցության դրական փորձ: Իսկ դա այնքան անհրաժեշտ է ապագա՝ հատկապես ամուսնական կյանքի համար:

## Ընտանեկան կոնֆլիկտներ

Նյարդայնացած ծնողների անկառավարելի գործողությունները հաճախ կարող են առիթ տալ երեխայի ներքին առաջացմանը: Սուր կոնֆլիկտների ժամանակ պայքարը թեժանում է բոլոր ճակատներով: Այն արտահայտվում է ամուսինների անհարգալից վերաբերմունքով, երեխաներին վեճի մեջ ներքաշելով, մի խոսքով՝ ստեղծվում է հիմնահարցերը հանգիստ լուծելու անկարողության իրավիճակ: Երեխաները ցավագին են տանում ծնողների անհամերաշխությունը: Կան ծնողներ, որոնք կարծում են, թե երեխան ոչինչ չի նկատում և հանգիստ զբաղված է խաղով կամ դասերով: Սակայն ոչինչ աննկատ չի անցնում երեխայի համար՝ ո՛չ թեժ կռիվները, ո՛չ փոխադարձ սառնությունը: Երեխան պարզապես պարփակվում է իր մեջ՝ փորձելով դուրս մղել ցավի զգացումը: Սակայն հնարավոր է, որ նա այդ ցավը կրի ամբողջ կյանքի ընթացքում:

Ընտանեկան կոնֆլիկտներն անխուսափելի են և ուղեկցում են մեզ ամբողջ կյանքի ընթացքում: Դրանք ծագում են տարբեր տեսակետների, դիրքորոշումների ու կարծիքների խաչաձևման, հաճախ էլ բախման հետևանքով: Կյանքում գոյություն ունի բախումնավտանգ իրավիճակից դուրս գալու երկու ձև՝ պոզիտիվ և դեստրուկտիվ:

Առաջինի դեպքում երկու կողմերը բարյացակամ մթնոլորտում քննարկում են իրենց անհամաձայնությունները, աշխատելով հասկանալ դիմացինին և հարգելով նրա կարծիքը: Կոնֆլիկտից դուրս գալու նման տեսակը նպաստում է ամուսինների հարաբերությունների զարգացմանը:

Դեստրուկտիվ կոնֆլիկտների դեպքում երկու կողմերից ոչ մեկը չի գնում զիջման, և հաճախ հակամարտող ծնողների համար երեխայի դաստիարակությունը վերածվում է «ռազմի դաշտի»: Այստեղ նրանց հնարավորություն է ընձեռվում բացեիքաց արտահայտել կարծիքները միմյանց մասին և առաջնորդվել «երեխայի նկատմամբ հոգատարությամբ»: Ընդ որում, տեսակետները հաճախ լինում են իրարամերժ, մեկը պնդում է խիստ դաստիարակության ահնրաժեշտությանը, մյուսը հակված է «խղճալ» դեռահասին և դժգոհություն է հայտնում ամուսնու կողմից կիրառված դաստիարակության մեթոդների վերաբերյալ: Ի դեպ, պարզվում է, որ երկու կողմերին էլ հետաքրքրում է ոչ թե դեռահասի դաստիարակությունը, այլ այն, թե ով է իրավացի նմանատիպ վեճերում:

Ամուսնու և կնոջ, ամուսնու և գոքանչի, հարսի և սկեսրոջ կոնֆլիկտային հարաբերությունները նույնպես ազդում են երեխայի վրա՝ հասցնելով նրան հոգեկան ցնցման, մի բան, որը, իհարկե, հետագայում կանդրադառնա նրա բնավորության վրա:

Այսպիսի ընտանիքում մեծացող երեխան կարող է զգալ իրեն օտարացած, լքված, և նրա մանուկ հոգում թշնամություն կծագի ծնողների հանդեպ:

Ցավոք, կյանքում շատ են հանդիպում այն դեպքերը, երբ ծնողները չեն սիրում իրենց զավակներին, իսկ երեխաները թշնամաբար են վերաբերվում ծնողներին: Այս ամենը ապագայում իր դրոշն է դնում սեփական ընտանիք կազմելու, երեխաներին դաստիարակելու, հարազատների հետ փոխհարաբերություններ ստեղծելու գործընթացների վրա:

Կոնֆլիկտների նկատմամբ պատասխան հակազդեցության ուժն ու խորությունը կախված են երեխայի խառնվածքից, դաստիարակությունից, տարիքից և այլն:

Նույնիսկ շատ փոքր տարիքի երեխաները զգում են ծնողների միջև ստեղծված կոնֆլիկտային հարաբերությունները: Նախադպրոցական տարիքի երեխաները ևս նրբորեն զգում են ծնողների վեճերը և բավականին իմաստավորված հակազդեցություն ցույց տալիս դրանց: Երբ ծնողների հարաբերություններում ինչ-որ բան փոխվում է, երեխան ուզում է հասկանալ ստեղծված իրավիճակը և փորձում հարմարվել նոր հարաբերություններին: Երեխան ցանկանում է երկուսի հետ էլ մտերմություն պահպանել և, ինքնաբերաբար, մեկ մոր կողմն է անցնում, մեկ՝ հոր: Այդպիսի վարքը կարող է երեխայի մեջ ձևավորել ստախոսություն, շողոքորթություն, շահախնդրություն, անվստահություն, ինքնամփոփություն կամ չափազանց ինքնավստահություն: Կոնֆլիկտային ընտանիքների երեխաները, որպես օրինաչափություն, անընդհատ տխուր են լինում, դժվարությամբ են հաղորդակցվում հասակակիցների հետ: Նրանց մոտ կարող են առաջ գալ հիվանդագին երևույթներ՝ ներոզ, գլխացավ, գիշերամիզություն: Ծնողները պետք է հաշվի առնեն, որ երեխայի բնավորության ազդեցիվ գծերը, որոնք իրենք այդքան քննադատում են, երեխայի ներքին ինքնապաշտպանական մեխանիզմների աշխատանքի արդյունք են:

Ծնողական ընտանիքի օրինակի հիման վրա հետագայում երեխան կառուցում է իր սեփական ընտանիքը: Երեխաները, որոնք վերցրել են ծնողներից վարքի բացասական գծեր, ավելի շատ են դժվարությունների հանդիպում կյանքում:

Կազմելով սեփական ընտանիք, նրանք ստիպված են լինում վերադաստիարակվել, վերափոխվել և ստեղծել նոր ընտանեկան փոխհարաբերություններ:

Երեխաների ներոզների և վախերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականները (Ջախարով Ա.Ի.) պնդում են, որ ծնողների միջև առաջացած վեճերը կարող են

երեխայի մեջ առաջ բերել դիստրես: Այն ազդում է նրա օրգանիզմի վրա. թուլացնում է բիոտոնուսը, իջեցնում դիմադրողականությունը և խախտում հոգեկան անդորրը:

Միաժամանակ ընտանեկան վեճերին ականատես երեխաները թերահավատությամբ են վերաբերվում իրենց ծնողներին: Անհամերաշխ ծնողները երեխայի

դաստիարակության գործում իրենց համար լրացուցիչ խնդիրներ են ստեղծում:

Դեռահաս աղջիկը, որը տեսել է, թե ինչպես են նսեմացնում իր մորը, հետագայում

դժվար թե ենթարկվի մոր կամքին: Մայրը (ինչպես նաև հայրը) կկորցնի

հեղինակությունը իր երեխայի աչքերում: Ծնողների վեճերն ի վերջո կարող են

հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ երեխան անցնում է նրա կողմը, ում իրավացի է

համարում, իսկ մյուս ծնողի նկատմամբ ամբողջ կյանքում լցվում է ատելությամբ:

Երեխան ունի մեծահասակ հարազատին վստահելու, նրա կողմից իրեն պաշտպան-

ված զգալու պահանջ: Եթե երեխան զրկված է այդ պաշտպանվածությունից, փոխում է

իր վարքը: Երեխայի մեջ առաջանում են հակասության զգացում և ագրեսիա: Որոշ

երեխաներ ձեռք են բերում մատնիչի, ցինիկի գծեր: Դրսևորում են մարդկանց

նկատմամբ անվստահություն, ինքնամփոփություն, ժամանակից շուտ սեռական

հետաքրքրության:

Ըստ ամերիկյան հետազոտողների՝ ընտանեկան կոնֆլիկտների առաջացմանը

մեծապես նպաստում են գերլարվածությունը աշխատավայրում, գործազրկությունը,

նյութական պրոբլեմները և աղքատությունը: Զույգերը դյուրագրգիռ են, կոշտ ու

կտրուկ միմյանց և շրջապատողների նկատմամբ: Նրանք հաճախ են մտնում

կոնֆլիկտների մեջ: Աշխատանքի բնույթը նույնպես նպաստում է կոնֆլիկտների

առաջացմանը: Մասնագիտությունները, որոնք դասվում են «օգնողների» կարգին



(բժիշկներ, հոգեթերապևտներ, սոցիալական աշխատողներ), ունեն ընտանեկան կոնֆլիկտների առաջացման բարձր հավանականություն: Դա կապված է ներկայումս լայն տարածում գտած «մասնագիտական այրում» համախտանիշի հետ: Ռիսկի գոտում են գտնվում նաև զինվորական ծառայողների ընտանիքները:

Ընտանեկան անդորրի վրա բացասաբար է ազդում ամուսինների պատկանելիությունը տարբեր ազգությունների և մշակույթների, ինչպես նաև նրանց արժեքային համակարգերի և իդեալների տարբերությունները:

Գոյություն ունեն նաև կոնֆլիկտների առաջացման ներընտանեկան պատճառներ: Դրանք են՝ երեխայի ծնունդը, ամուսիններից որևէ մեկի երկարատև հիվանդությունը, երեխայի հիվանդությունը, չբերությունը, անհավատարմությունը, հոգեբանական և ֆիզիկական անհամատեղելիությունը և այլն:

Ամենից հաճախ ընտանիքներում տարածայնություններ առաջանում են երեխայի կյանքի առաջին տարիներին: Դա հավանաբար բացատրվում է այն իրողությամբ, որ մայրն անվերապահորեն իր ուշադրության հիմնական մասը բնեռում է երեխայի վրա, իսկ հայրը չի դիմանում այդ կարգավիճակին: Աֆեկտիվ, ցավագին ու խանդոտ ռեակցիա տալով դրան հայրն ինքն իրեն ընկալում է որպես «երրորդ ավելորդ»:

Երբեմն ամուսինները, միմյանց վրա բեկելով իդեալականացված սեփական գծերը, առանց գիտակցելու, դիմացինին ընկալում են որպես իր «նմանակ» և պահանջում միակողմանի կարեկցանք, ըմբռնում և սեր:

Երբ այդ պահանջները չեն համապատասխանում ամուսնու իրական բնավորությանը, առաջանում է անբավարարվածություն, և ձևավորվում է հաճախ

երկար ժամանակ արտաքննապես չդրսևորվող կոնֆլիկտ: Այս դեպքում երեխային են փոխանցվում ամուսինների չիրականացված սպասումները, և նա ստիպված է լինում կատարել հակասող դերեր ու գործառույթներ, որոնք չեն համապատասխանում իր հնարավորություններին: Իր վրա կենտրոնացնելով ծնողների հուզական լարվածությունը՝ երեխան միաժամանակ ուժեղացնում է նրանց դեռևս չարտահայտված, ծածուկ կոնֆլիկտը, որն իր ամբողջ ուժով ի հայտ է գալիս երեխայի դաստիարակության ոլորտում՝ ծնողների իրարամերժ վերաբերմունքի ձևով: Իրենց տարաձայնություններից և անձնային առանձնահատկություններից ելնելով՝ հաճախ ծնողներն էլ չեն կարողանում ժամանակին ու համաձայնեցված հարմարվել երեխային, որը կարիք ունի անհատական, գթասիրտ, համբերատար և քնքուշ վերաբերմունքի:

Որպես հետևանք՝ երեխայի մեջ առաջանում են հուզական խանգարումներ, որոնց հաջորդում են որոշակի խոչընդոտները՝ ծնողների հետ հարաբերություններում: Դա էլ իր հերթին առաջացնում է ծնողների պատասխան աֆեկտիվ ռեակցիան, և ստեղծվում է ընտանեկան հարաբերությունների խանգարումների բարդ շղթա:

Երեխայի մեջ աֆեկտիվ ռեակցիա առաջացնող, հաջորդ, ոչ պակաս կարևոր գործոնը ծնողների կողմից առաջ քաշվող պահանջների և իրենց իսկ վարքի անհամապատասխանությունն է: Դիտարկենք մի քանի դեպք, երբ անհավասարակշռված և եսասեր ծնողները երեխայից պահանջում են հնազանդություն և չափավորություն:

- Ծնողներն ամենուր ուշանում են և միաժամանակ երեխայից պահանջում օրվա ռեժիմի կատարում:

- Մայրը բողոքում է երեխայի անզուսպ լինելուց, սակայն ինքն անընդհատ ընդհատում է ուսուցչին:

- Ծնողներն իրենց զավակի խնդրանքների հանդեպ «խուլ» են, բայց տանել չեն կարող երեխայի համառությունը:

Բոլոր դեպքերում ծնողները չեն նկատում իրենց բնավորության այն թերությունները, որոնց դրսևորումների նկատմամբ երեխայի մեջ կարող է առաջանալ աֆեկտիվ ռեակցիա:

Ընտանեկան բազմաթիվ հարցեր շատ ավելի հեշտ են լուծվում, եթե ծնողների միջև ջերմ, բարյացակամ հարաբերություններ են: Ամեն դեպքում երբ ամուսինները նկատում են, որ զրույցը կարող է վերածվել վեճի, պետք է փորձեն ընդհատել այն և հետաձգել ավելի հարմար պահի, երբ երեխաները ներկա չեն լինի: Այս դեպքում և երեխաները գերծ կմնան անհանգստությունից, և ամուսինները ժամանակ կունենան մտածելու և վերանայելու իրենց տեսակետները:

Այն ամենը, ինչ ասվեց երեխայի վրա ընտանեկան կոնֆլիկտի ազդեցության մասին, վերաբերում է նաև կոնֆլիկտի լուծման ավելի բարդ ու խորը ձևին՝ ամուսնալուծությանը: Տարբերությանն այն է, որ այս դեպքում ծնողները չեն ուզում հանուն ընտանիքի պահպանման զիջումների գնալ իրենց փոխարաբերություններում:

Դրա հետևանքով ծնողներն ավելի ու ավելի դաժանորեն են մտնում հակամարտության մեջ և հաճախ միայն սեփական մեղքի զգացումը չընդունելու ու ինքն իր աչքին արդարանալու համար: Այդպիսի կոնֆլիկտները երեխայի վրա էլ ավելի ավերիչ ազդեցություն են ունենում:

Նկատվել է, որ նախադպրոցական տարիքի երեխաները հաճախ իրենց մեղավոր են համարում ծնողների ամուսնալուծության մեջ: Մոտ տասը տարեկան երեխաները մեղադրում են ծնողներին, կամ միայն մեկին, ում մեղավոր են գտնում իրենց անպաշտպան մնալու մեջ: Ծանր հետևանքներ չեն լինում միայն այն դեպքում, երբ ամուսնալուծությունը երեխաների կողմից ընկալվում է որպես մղձավանջից ու տառապանքից ազատվելու միակ միջոցը:

Պետք է կարծել, որ երեխա ունեցող ամուսինները հակված են հարթելու ընտանեկան կոնֆլիկտները: Այնուամենայնիվ, եթե ոչ մի կերպ չի հաջողվում վերականգնել ընտանեկան խաթարված անդորրն ու բարենպաստ հոգեբանական մթնոլորտը, ապա, ըստ երևույթին, ամուսնալուծությունը լավագույն ելքն է թ՛ե երեխաների, թ՛ե ծնողների համար: Ծնողները պետք է մշտապես հիշեն, որ եսասիրությունը, սեփական պահանջմունքներին հագուրդ տալու միտումը ընտանեկան կյանքում երեխաների ներդաշնակ դաստիարակության խաթարիչն ու համար մեկ թշնամին են:

Ընտանեկան հոգեբանությունը հոգեբանության այն ճյուղն է, որն ուսումնասիրում է ընտանեկան հարաբերությունների էությունն ու էվոյուցիան, դրանց առաջացման, ձևավորման, կայունացման և քայքայման առանձնահատկությունները, ինչպես նաև ընտանեկան և ընտանեկան կյանքին վերաբերող մի շարք այլ հարցեր: Ընտանեկան հոգեբանությունը հոգեբանության չափազանց կարևոր բաժին է մարդկանց մեծամասնության համար, քանի որ մեզանից շատերի համար ընտանիքը այն հիմնական արժեքներից մեկն է, որից կախված է մեր երջանկությունը: Լավ, ամուր, ընկերական ընտանիք կառուցելը և դրանում եղած բոլոր հարաբերությունները բավականին բարձր մակարդակի հասցնելը շատ դժվար է: Ուստի ընտանիքի

հոգեբանությունը պետք է ուսումնասիրի յուրաքանչյուր մարդ, ով ունի կամ ցանկանում է ընտանիք կազմել: Ընտանեկան հոգեբանության ուսումնասիրությունը լուրջ և շատ նշանակալի ներդրում է մարդու կյանքում, քանի որ լավ, երջանիկ ընտանիքը հուսալի հենարան է ցանկացած մարդու համար, որի շնորհիվ նա կարող է հաղթահարել կյանքի ցանկացած դժվարություն:

## Կոնֆլիկտներ

Ընտանեկան հոգեբանության ուսումնասիրության առարկաներից մեկը կոնֆլիկտներն են: Քանի որ ընտանիքը բավականին բարդ համակարգ է, հատկապես, եթե ընտանիքը մեծ է՝ բաղկացած տարբեր սերունդների մարդկանցից, ապա հաշվի առնելով մարդու էությունը՝ միանգամայն ակնհայտ է, որ դրանում հնարավոր չէ խուսափել կոնֆլիկտներից: Ընտանեկան կոնֆլիկտները սովորական բան են, մեկ այլ բան, որ դրանք կարող են տարբեր ձևերով ընթանալ, և կախված դրանց մասնակից մարդկանց վարքագծից, նույն կոնֆլիկտները հանգեցնում են տարբեր հետևանքների: Ցավոք սրտի, մարդկանց մեծ մասը պատշաճ պատրաստված չէ նման հակամարտություններին: Սովորաբար մենք վարվում ենք այնպես, ինչպես մեր ծնողներն են վարվել նմանատիպ իրավիճակներում, որոնց ընտանեկան կյանքը մենք դիտարկել ենք մանկության տարիներին, ինչը սկզբունքորեն սխալ է: Եվ ոչ միայն այն պատճառով, որ մեր կյանքի իրավիճակները կարող են պարզապես նման լինել այն իրավիճակներին, որոնցում եղել են մեր ծնողները, բայց ոչ միանման, այլ նաև այն պատճառով, որ շատ ծնողներ չեն կարողանում իրենց երեխաների համար ճիշտ օրինակ ծառայել կոնֆլիկտային իրավիճակներում: Հետևաբար, շատերը չգիտեն, թե ինչպես ճիշտ վարվել կոնկրետ կոնֆլիկտային իրավիճակում, բայց հաճախ կարծում

են, որ գիտեն: Դե, եթե մարդիկ գոնե դիմում են հոգեբանների օգնությանը նման կոնֆլիկտները լուծելու համար, ապա նրանք հնարավորություն ունեն խուսափելու դրանց բացասական հետևանքներից: Բայց նրանցից ոմանք որոշում են կայացնում, թե ինչպես վարվել կոնկրետ կոնֆլիկտի դեպքում՝ լիովին վստահ լինելով, որ իրավացի են, նախքան մասնագետի հետ կապ հաստատելը, կամ ընդհանրապես անհրաժեշտ չեն համարում որևէ մեկի հետ կապ հաստատել: Միանգամայն ակնհայտ է, որ առանց ընտանեկան կոնֆլիկտների լուծման դրական փորձի, այդպիսի մարդիկ միայն վնաս են հասցնում իրենց կյանքին, քանի որ նրանց որոշումները հաճախ սխալ են ստացվում, հատկապես երկարաժամկետ հեռանկարում:

Ընտանեկան հոգեբանությունը ոչ միայն կարող է մարդկանց սովորեցնել, թե ինչպես վարվել ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակում, այլ նաև սովորեցնում է, թե ինչպես կանխել նման կոնֆլիկտները: Բավական է ասել, որ ընտանեկան կոնֆլիկտների պատրաստակամությունն ինքնին զգալիորեն նվազեցնում է դրանց սրությունը: Երբ մարդը հասկանում է, թեկուզ ընտանիք ստեղծելուց և նրանում հակամարտությունից առաջ, թե ինչ կոնֆլիկտային հնարավոր իրավիճակների է հանդիպելու շատ մեծ հավանականությամբ, ապա բարոյապես քիչ թե շատ պատրաստ է դրանց: Ուստի նրա համար ոչ մի աղետ չի լինի, եթե ընտանիքում հանկարծ ինչ-որ բան սխալ լինի, եթե դրա մեջ անցանկալի, բայց նախատեսված խնդիրներ առաջանան: Նա արդեն առնվազն մոտավոր պատկերացում կունենա, թե ինչ և ինչպես անել հակամարտությունը լուծելու համար: Այսպիսով, եթե դուք չեք ցանկանում օգնություն խնդրել հոգեբաններից, դուք ինքներդ դառնում եք հոգեբան ձեր և ձեր ընտանիքի համար՝ ուսումնասիրելով ընտանեկան հոգեբանությունը: Այս ամենին պետք է նախօրոք պատրաստ լինել առանց հուսալու, որ քո ընտանիքում

ամեն ինչ այլ կերպ կլինի, երբեք խնդիրներ, սկանդալներ, կոնֆլիկտներ, տարաձայնություններ չեն լինի: Այսպիսով, պետք է պատրաստ լինել ամեն ինչի, այդ թվում՝ ընտանեկան կոնֆլիկտների:

## Պատասխանատվություն

Հաջորդ կետը, որին ուշադրություն է դարձնում ընտանիքի հոգեբանությունը պատասխանատվությունն է: Դժվար է պատկերացնել նորմալ ընտանիք, որն ամբողջությամբ բաղկացած լինի անպատասխանատու մարդկանցից: Նման ընտանիքներ, իհարկե, կան, բայց դժվար է նրանց ընտանիք անվանել, էլ չասած նորմալ, բարեկեցիկ, քանի որ նրանցում կյանքը չափազանց սթրեսային է ու անկանխատեսելի: Անգամ երբ ընտանիքի անդամներից միայն մեկը՝ ամուսիններից մեկը, անպատասխանատու անձնավորություն է, այդպիսի ընտանիքի խնդիրները երաշխավորված են: Եվ կան շատ նման ընտանիքներ, որոնցում ամուսիններից մեկը կամ երկուսն էլ անպատասխանատու մարդիկ են: Բանն այն է, որ ոմանք չեն մեծանում ընտանեկան կյանքով: Մյուս կողմից, որոշ մարդկանց մոտ շատ լավ է զարգացած էգոիզմը, ոչ թե առողջը, այլ մանկամիտ, քմահաճ, անհիմն էգոիզմը: Եվ չնայած երեխաները նույնպես լավ ալտրուիզմ ունեն, որը չի նկատվում ոչ մի մեծահասակի մոտ, այնուամենայնիվ, շատ ավելի հաճախ նրանք իրենց չափազանց եսասիրաբար են պահում՝ ամբողջովին անտեսելով այլ մարդկանց ցանկությունները, կարիքները և խնդիրները: Իսկ եթե մարդն այս ամենից չի աճում, ապա նրա բնավորության եսասիրությունը չափազանց բացասաբար է անդրադառնում նրա ընտանեկան կյանքի վրա: Բավական է նայել ամուսնալուծությունների վիճակագրությունը՝ հասկանալու համար, որ ինչ-որ բան ակնհայտորեն սխալ է մեր դաստիարակության կամ մշակույթի հետ, հատկապես, երբ հաշվի են առնում, որ

շատ ամուսնալուծություններ տեղի են ունենում այն պատճառով, որ մարդիկ չեն կարողանում համաձայնվել միմյանց հետ, չեն ցանկանում զիջումների գնալ: Այսպիսով, գիտակցելով ընտանեկան կյանքին պատասխանատու մոտեցման կարևորությունը, մարդը կարող է նախապատրաստվել դրան՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն ընտանիքի հոգեբանության ուսուցմանը, այլև իր անձնական հատկանիշներին, էգոիզմին, որոնք պետք է չափավորվեն: Ի վերջո, քչերն են ցանկանում գործ ունենալ եսասեր մարդկանց հետ, էլ չասած ապրել, նույնիսկ երբ այդ մարդիկ շատ խարիզմատիկ են ու հմայիչ: Ընտանիքը պետք է մարդուն դուր գա, ուրախացնի, ոչ թե պատիժ լինի նրա համար:

## Վստահություն

Ընտանիքի և ընտանեկան հոգեբանության կարևորագույն արժեքներից մեկը վստահությունն է: Այն մարդիկ, ովքեր ընտանիք ունեն կամ նախատեսում են ընտանիք կազմել, պետք է փորձեն անել ամեն ինչ իրենց զուգընկերոջ հետ առավել վստահելի հարաբերություններ հաստատելու համար: Սակայն շատերը լիովին չեն հասկանում, թե ինչպիսին պետք է լինի վստահությունը մարդկանց միջև և ինչի վրա է այն հիմնված: Ի վերջո, նույնիսկ փոքր, բայց շատ ցավոտ սուտը կարող է շատ երկար ժամանակ խաթարել վստահությունը մարդու հանդեպ: Եվ հակառակը, եթե մարդը անհիմն չի վստահում ձեր զուգընկերոջը, կասկածում է նրան ամեն ինչում և անընդհատ ստուգում է, դրանով իսկ ցույց է տալիս իր անբարյացակամ վերաբերմունքը նրա նկատմամբ: Այսինքն՝ երբեմն հենց ինքն է խաբելու պատճառ տալիս զուգընկերոջը՝ անհիմն չվստահելով նրան: Սա չի նշանակում, որ պետք է անխոհեմ կերպով վստահել զուգընկերոջը, բայց անվստահությունը չպետք է լինի ցուցադրական, և այն պետք է հիմնված լինի անհերքելի ապացույցների վրա, և ոչ թե



ենթադրությունների: Շատ ընտանիքներ տուժել են միայն այն պատճառով, որ ամուսիններից մեկը ոչ այնքան առողջ երևակայություն է ունեցել, որի պատճառով ամենուր և ամեն ինչում խաբեություն է տեսել: Այսպիսով, պետք է զգույշ լինել այս հարցում, քանի որ ոչ ոք չի սիրում մեղադրվել ինչ-որ բանի մեջ անհիմն և անարդարացիորեն: Եվ, իհարկե, պետք է հետևել սեփական գործողություններին՝ չխաթարելու համար վստահությունը: Այսպիսով, ընտանիքի վստահությունը շատ կարևոր դեր է խաղում ոչ միայն ընտանիքում, այլ ընդհանրապես կյանքում:

## Ամուսինների միջև հարաբերությունները

Ընտանիքի հոգեբանության մեջ շատ կարևոր են նաև ամուսինների

հարաբերությունները: Այդ հարաբերությունների մի մասն են կազմում վերը նկարագրված կետերը՝ կոնֆլիկտներ, պատասխանատվություն, վստահություն, բայց ոչ միայն: Այստեղ կարևոր է հասկանալ, որ ամուսինների հարաբերությունները հարաբերությունների հատուկ ձև են: Եվ այդ հարաբերությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ ամուսնացած մարդիկ որոշակի պարտավորություններ ունեն միմյանց հանդեպ: Առանց պարտավորությունների հարաբերություններ կան. դրանք ունեն իրենց դրական ու բացասական կողմերը, բայց հիմնականում, երբ խոսում ենք ընտանեկան հարաբերությունների մասին, դրանք պարտավորություններով հարաբերություններ են: Բայց այս պարտավորությունները մարդիկ կամովին են ստանձնում :

## Ընտանեկան կյանքի պատրաստակամություն

Վերը նշված և բոլոր մյուս ընտանեկան խնդիրները լուծելու, կամ ավելի լավ՝

խուսափելու համար չափազանց կարևոր է մարդուն պատրաստել ընտանեկան

կյանքին: Ընտանիք կազմելու երիտասարդների պատրաստակամությունը նույնպես

ընկնում է ընտանիքի հոգեբանության տեսադաշտում: Չես կարող ինչ-որ բանում լավ լինել առանց սովորելու: Բայց ի՞նչ է նշանակում պատրաստվել ընտանեկան կյանքին: Մա նշանակում է, որ երիտասարդները պետք է շատ ավելին իմանան նման կյանքի մասին, քան գիտեն դրա մասին՝ հիմնականում դիտարկելով իրենց ծնողների փոխհարաբերությունները, որոնք, որպես կանոն, իրենց համար ընտանեկան կյանքի միակ օրինակն են: Եվ մենք բոլորս գիտենք, որ որոշ ծնողներ չափազանց բացասական օրինակ են թողնում իրենց երեխաների համար: Բնականաբար, եթե երիտասարդներն ապրում են օրինակելի ընտանիքներում, որտեղ բոլորը հարգում են միմյանց, որտեղ բոլորը երջանիկ են, ապա նրանք ոչ միայն կարող են, այլև պետք է օրինակ վերցնեն իրենց ծնողներից: Հակառակ դեպքում պետք է սովորեն ընտանեկան կյանքի բոլոր նրբությունները այլ ձևերով, այդ թվում՝ մասնագետների հետ շփվելու միջոցով: Այդ ժամանակ նրանք պատշաճ կերպով կպատրաստվեն ընտանեկան կյանքին և կստեղծեն լավ, ընկերական, ամուր ընտանիք, որտեղ բոլորը երջանիկ կլինեն:

Ընդհանրապես, կյանքում շատ բաներ կախված են մարդու արժեհամակարգից: Այն մարդիկ, որոնց համար ընտանիքը կարևոր է, կսովորեն այն ամենը, ինչ պետք է իմանան ընտանիքի և ընտանեկան կյանքի մասին, այդ թվում՝ ընտանեկան հոգեբանության ուսումնասիրության միջոցով: Իսկ նրանք, ում համար ընտանիքը արժեք չունի, հավանաբար նույնիսկ չեն էլ փորձի սովորել: Մարդիկ միշտ առավելագույն ուշադրություն են դարձնում այն ամենին, ինչն իրենց համար կարևոր և արժեքավոր է, ուստի ընտանեկան կյանքի պատրաստակամությունը մեծապես կախված է արժեհամակարգից:

## Եզրակացություն

Այսպիսով, ընտանիքը ամենակարևոր օղակն է երեխայի կյանքում : Այն մեծ ազդեցություն է թողնում երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում:

Դասավանդման երկար տարիների փորձը ցույց է տվել, որ այն երեխաները, որոնց ընտանիքներում ամեն ինչ ներդաշնակ է, ավելի ուշադիր են, լավ են սովորում, կազմակերպված են: Նրանք առողջ մտածելակերպ ունեն, կարծրատիպեր չունեն: Հակառակը կարելի է ասել ոչ լիարժեք ընտանիքներում ապրող, մշտապես կոնֆլիկտների մեջ գտնվող երեխաների մասին: Նրանք ագրեսիվ են, վախվորած, ուսման նկատմամբ մոտիվացիա չունեն, երբեմն լռակյաց են, երբեմն շատախոս:

Ուստի ընտանիքում առողջ երեխա մեծացնելու համար շատ կարևոր է ամուսինների կողմից բարենպաստ մթնոլորտի ստեղծումը, միմյանց հասկանալը և երեխային առողջ մթնոլորտում մեծացնելը:

## Օգտագործված գրականության ցանկ

Монахова Альбина Петровна. Семейные конфликты

<https://rehabfamily.com/articles/prichiny-semeynykh-konfliktov/>

Ընտանիք և հոգեբանություն/դասագիրք բուհերի ուսանողների համար/

Ընտանիք և հասարակություն/ամսագիր/